

Վտանգավոր բեռներ

1. «Երկաթուղային տրանսպորտով փոխադրվող վտանգավոր բեռների ցանկը և դրանց փոխադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 30.07.2009թ. թիվ 892-Ն որոշման թիվ 2 հավելվածի II գլխի 4-րդ կետի համաձայն վտանգավոր բեռները բաժանվում են հետևյալ դասերի՝

- 1) 1-ին դաս՝ պայթավտանգ նյութեր
- 2) 2-րդ դաս՝ սեղմված, հեղուկացված եւ ճնշման տակ լուծված գազեր.
- 3) 3-րդ դաս՝ դյուրաբոցավառ հեղուկներ.
- 4) 4-րդ դաս՝ դյուրավառ պինդ, ինքնաբռնկվող եւ ջրի հետ փոխազդեցության հետեւանքով բռնկվող գազեր արտանետող նյութեր.
- 5) 5-րդ դաս՝ թթվեցնող նյութեր եւ օրգանական պերօքսիդներ.
- 6) 6-րդ դաս՝ վտանգավոր քիմիական եւ վտանգավոր կենսաբանական նյութեր.
- 7) 7-րդ դաս՝ ռադիոակտիվ նյութեր.
- 8) 8-րդ դաս՝ այրող եւ (կամ) քայքայիչ նյութեր.
- 9) 9-րդ դաս՝ այլ վտանգավոր նյութեր:

2. Վտանգավոր բեռների փոխադրման ընդհանուր պայմաններն ու պահանջները սահմանված են նշված որոշման թիվ 2 հավելվածի III գլխի 10, 11 և 12-րդ կետերով:

3. «ՊՆ» ծածկագրով պայթուցավտանգ նյութերը թույլատրվում է բեռնաթափել միայն հետևյալ կայարաններում.

- Վանաձոր
- Ղալթախչի
- Գյումրի
- Արթիկ
- Արևիկ
- Արմավիր
- Մասիս
- Աբովյան
- Հրազդան
- Քանաքեռ
- Չոփ
- Երևան
- Կարմիր Բլուր
- Արտաշատ